

նի, թէ և փայլակը կայծակնահար ընելով  
տունը՝ անկարելի էր որ միւս տաճարաւ-  
կից ուրախակից բազմականակից մար-  
դիկն ազատէին. մենց բնազրի ետեւէն զը-  
նանք: Տաճարի դուռը բաց մնացեր էր,  
ոչ որ երկիւղից մօտ չէր գնար և ոչ իշ-  
խէր ներսը նայել: Հին աշխարհի տաճար-  
ները ըստ մերոց պատուհան չընէին, այլ  
լուսանցոյց երդից, ուրեմն անձրեն և արեն  
եւս լաւ կամ մտնելով ներս, ըիմիսապէս  
լուծում և քայցայում էին գէշ ինկած  
մարմինները՝ որոնք անտերունչ թափուած  
էին բազում ամիսներ՝ «մինչեւ նեխեցան  
մարմինց նոցա, և կողոպտեցան և յաղ-  
կեցան. քակեցան լուծան ի միմեանց,  
ցրուեցան ոսկերք նոցա»: Այսպիսի լոկ  
չօր և ցամաք վիճակի մէջ ոսկրուիր ապի-  
տուկ կրի կտորներ կրնային նմանիւ բան  
թէ կոռայի, որ մարդու իրանը կը նշանա-  
կէ ամբողջովին, մինչ ցրաս ոսկրուների  
կողա ասել ոչ է ի դէպ: Աւելի յարմար  
չէ ասել «զհողացեալ զոսկերս նոցա».  
ըստ այնմ «հողացեալ մարմինք»: քանզի  
յաղիի մօտ է փտելուն և հող դառնա-  
լուն:

## Զ. Էջ 56 տող 2.

«Այն զկապուտ, զաւար բանակին և  
զկանայս թագաւորին և զբամբիշն և բզ-  
րանական ընդ նոսին». մեզ չնշեր էինց  
այդ բառը. իսկ Հ. Տ. Սահակեանն ուղ-  
ղեր է զբանակն, այսինքն իրը յուն բա-  
նակը (անշուշտ վրանները): Այս ուղղու-  
թինը ըստ մեզ տեղին չէ. զի ոչ երբէք  
բուն բանակ՝ վրանները կը հասկացուին,  
այլ այն՝ որ առ այլս կոչի զուարտից  
գեներալ, ուր է Սպարապետն և խոր-  
հուրդ նորա: Ուստի Հայք երր «առին  
զկապուտ, զաւար բանակին» անպատճառ  
տիրացած լինելու էին նաև բուն բանա-  
կին, որովհետեւ «զկանայս թագաւորին և  
զբամբիշն» աւարի հետ զերած էին, և  
Շապուհ հազի հազ մազապուր ազատած,  
մէկ հատ բաշընթաց ձիով կը փախչի. բնչ  
կը մար. արդեօք զիանիսն? վրանները:  
Ուրեմն կամ չնշելու է և կամ եթէ տա-

կաւին հարկ կայ աւելացնել կամ ուղղել,  
մօտաւորագոյն թուի - կանաց և թամրչի  
հետ ասել և «զմանելունին ընդ նոսին»: Ու-  
րովկետեւ «առին զկապուտ և զաւար բա-  
նակին»՝ առին — թող զլյանենիրը —  
նաև «զինչս և զստացուածն նոցին . . .  
. . . զկանայս նոցա և զգանձս և զկեսն  
(իմա՞ զկանայս) և զկազմած նոցա»:

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ



## ՀԱՖԸՁԷՆ ՄԻ ՔԵՐԹՈՒԱԾ

— Հ Յ Ց Տ —

Պարսիկ բանաստեղներուն մէջ Հաֆը-  
զը, կրնամ ըսել, ամենէն անմատչելին և  
ամենէն անթարգմանելին է: Հաֆըզն եր-  
կու տող յաջողապէս թարգմանել և նոյն  
գեղեցկութիւնը և ներդաշնակութիւնը տալ  
իւր լեզուին մէջ, հաւասար է հասոր մը  
թարգմանելու, նախ յանգային զժուարու-  
թեանց և ապա լեզուին անհամեմատ գե-  
ղեցկութեան և քաղցրութեան պատճառաւ:

Ամէն ուրիշ բանաստեղները, որպէս  
են Ֆիրդուսի, Սուադի, Ճամին, Խայեամ,  
Ճէլլալ-Լիտայինի-Բումի, ևն, իրենց տա-  
ղերը մնեաւ մասամբ մեսնելի ոճով զրած  
են, դուն ուրեց և բուպահի, որով, ամէն  
մէկ երկեակին կամ բառեակին յանգը  
փոխուելով՝ զիւրութիւն կու տայ թարգ-  
մանչին նորանոր յանգեր գտնելու: Մինչ-  
զեն Հաֆրգեան օծերը այսպէս չեն: Մի  
և նոյն յանգն է որ բովանդակ քեր-  
թուածի ամբողջ տեւողութեան մէջ ամէն  
երկեակին ծայրը պիտի լսուի, 20-30 և  
երբեմն աւելի անգամներ: Դիւրին չէ  
թարգմանչին, իւր լեզուին մէջ, նոյնչափ  
նմանայանց բառեր գտնել, հեղինակին հետ  
զուգակշռութիւնը պահելու համար:

Գալով լեզուի հանգամանաց, սա ալ  
մի այլ անհարին արգելը է կը կա-  
սեցն թարգմանչին զրիչը: Գաղափարնե-  
րու նորութեան՝ այլազանութեան և ան-  
ակնկալներու հետ գործ չունինք հոս.  
Հաֆրզին նիւթը միշտ և միշտ նոյնն

է, զինի և սէր՝ որոց շուշջը կը դառնայ իւր բոլոր խանդն ու երեւակայութիւնը, այլ թէ ո՞րպիսի հմայիչ պատկերներով, սրան-չելի գարձուածներով, ախորդ և համեղ և սահուն ոճով և, որ անհաւասարելին է, ձայներու այն գերենափր և զուգայարմար շարակցութեամբ որ զմայլելի ներդաշնակութիւն մը կը կազմէ: Այս կազմի մը կը կազմէ: Այս կազմի մը կը կազմէ: Այս պերճ հանդերձանքէն, ոչ բանաստեղծութիւն կը մնայ, ոչ հրապոյը և ոչ հիացում, Ամենուն զիտցած հասարակ մէկ զաղափարը նորատեսիլ և նորասրանչ շրեղութեամբ տառջի դնելու մէջն է բանաստեղծին բոլոր զաղանիքը: Գիտական՝ արուեստական և փիլիսոփայականին մէջ լեզուն գործիք մ'է միւյն, զաղափարց լոկ յայտարար, որ ո՞րչափ չոր՝ պարզ անսեթեւեթ լինի՝ այնչափ յարգի է, իսկ բանաստեղծականին մէջ, ամենայն ինչ է: Հոյ խօսքը լեզուին քերականական հաւատարմութեան ու ճշղութեան վրայ չէ, անշուշտ, այլ ձայներու այն հրաշարուեստ յաջորդութեան ունկնապարար հեշտութեան և հոգեգրաւ ախորժութեան որ կ'երթայ կը նոյնանայ երածշտականին հետ և երկնազդեցիկ սիմֆոնի մը կը դառնայ: Այս է ահա Հափրզին արւեստը և զաղոնիքը:

Կրնայ արդեօք թարգմանիչ մը բնագրին այս գեղեցկութիւնները մասսամբ գէթ պահպանելու հաւանականութեամբ ի փորձ մատչէլ: Զհամարձակելու, և ոչ իսկ մտքէ անցուցած էի ես այսպիսի յաւակնութիւն մը, երբ, անցեալ տարի, Փարիզ, քարեկամի մը քով կոռնկն հին ամսաթերթի հաւաքածոյ մը տեսայ որուն մէջ Հափրզին ալ մի քանի օծեեր թարգմանուած գտայ Աէյեադ Պետրոս Մատաթեանցէն: Յառաջիկայ քերթուածը որ վաղուց իմ ալ հիացման առարկայ եղած էր, մասնաւորապէս զրաւեց ուշադրութիւն: Կրկին կրկին կարդացի Ք բնագրին հետ բաղդատեցի, տեսայ որ գոհացուցիչ չէ, ոչ միայն հարազատութիւն՝ հաւատարմութիւն պահուած չէ, այլ շատ տեղերն աւ լւա հասկցուած չեն և ինչ ինչ մա-

սեր ալ բոլորովին զանց առնուած: իսկ զալով լեզուի և նաշակի, բոլորովին բացակայ:

Որովհետեւ իմ նախասիրած մէկ կտորին ալ վրայ կը դառնար փորձը, սա ինձ զրդիու մը եզաւ մի նոր փորձ ալ իմ կողմանէս ընել, տեսնելու թէ ո՞րչափի կրնայ համարձակեցնել հայ լեզուն: ի՞նչ կու տայ և ի՞նչ կը զւանայ:

Հափրզին գործածած լեզուն ինքնին արդէն երածշտական է: ուստի մեր թաւ և գոռ շեշտերով և անազնալուր և բազմավանկ բառերով պարտիկ բանաստեղծին նորք՝ ճկուն՝ քաջալար ձայները տալ յաւակնելն անտեղի է և բանի դէմ ալ է մի և նոյն հանգամաննը ամէն լեզուի մէջ ալ փնտոել և գեղեցկութիւնը մի և անայլ ընդունել և նոյն տիպարը որոնել միշտ ամենուրեց: Ամէն լեզու իւր յատուկ շեշտը՝ ճաշակը և գեղեցկութիւնն ունի զոր գո՞րծ է ի փայլ՝ ի հանդէս բերել: Յայսմ է թարգմանչին քաջութիւնը և ճարտարութիւնը: Հակառակ իւր խրոխտ և առնացի ընթացքին (allure) մեր լեզուն ալ ունի սակայն իրեն յատուկ նաշանը՝ փափկութիւնը և գեղեցկութիւնը որ նոյն շլինելով ուրիշներուն հետ, նուազ շափով չգոհացներ ճաշակը և ականջը: Վկայ Բագրատունիի և Հիւրմիւզի սրանչեւ լարուեստ թարգմանութիւնները, չափեալ և արձակ, ուր համեղ զաշնաւորութիւնն մը կը տիրէ ծայրէ ի ծայրը: Ուրեմն առնել գիտնալու է լեզուէն ինչ որ կրնայ տալ, և, իրը հետեւութիւն, կը յաւելում որ անյաջող փորձերը, մեծաւ մասամբ, ոչ այնքան լեզուին վերագրելի են ո՞րքան զրչի անտառկութեան: Միեղմացուցիչ պարագայ մը որ կայ՝ գործին գծուարութիւնը և պայմաններու խստութիւնն է, որպէս է յառաջիկայս: Յիրաւի բան տողէ բազեալ այս փոքրիկ քերթուածը այնքան գծուարութիւն և յոգնութիւն պատճառեց ինձ որքան թերեւ չէի ունենար իթէ հասորիկ մը լինէր թարգմանելու: Անհաւատալի կու գայ, բայց փորձը առնողները գիտեն թէ ինչ կ'ըսեմ: Եօթ ութ ամիսէ

աւելի է որ առաջին փորձը ըրած եմ. անկէ ի վեր ամէն պատեհ առիթներով և ընդհատ ընդհատ միջոցներով շարունակ աչքէ անցուցած՝ կոկած՝ յղկած՝ սրբազրած եմ, Փուալյի յանձնարարած խստութենէն շատ աւելի անողոք վերաբերմամբ, և այս վերջին ձեւն հագիւ ուրեմն ինձ բաւարար երեցաւ:

Իսկ պայմաններու խստութեան մասին, իմ՝ միջրդուսի փորձերէ ընթերցողք արդէն գիտեն թէ ո՞րպիսի կազկանդումերով կը սիրեմ պարաւանցել զիս: Երկիւղած հաւատարմութիւն, յատակութիւն, ականջի զիւր և հեշտանք, չափի նոյնութիւն, յանգերու բնականութիւն և ճոխութիւն և լեզուի հարազատութիւն:

Թարգմանութենէ մը նոյնութիւն չպա-

հանջուկի, ի հարկէ. իւրաքանչիւր ոք իւր լեզուին սեփական սուլութեանը համեմատ կը վարի, և կը բռնադատուի շատ անգամ մեծագոյն հարկերու առջեւ փոքր և թեթեւ շեղումներու տեղի տալ, պայմանաւ սակայն որ իմաստի այլայլութիւն չբերեն և հեղինակին դիտումն չհեռացաւ:

Թէ ո՞րչափ կը ցածրած եմ պահել այս պայմանները, ընթերցողին աւելի դիրացնելու համար զատաստանը, թարգմանութեան հետ կցեցի նաեւ բնագիրը, կունկի թարգմանութիւնը և հայ արտազրութիւնը, ձեզ թողլով միայն ընտրութիւնը, որպէս զի իրքեւ ի պատկերի տեսնէ ընթերցողը ո՞րպիսի դժուարութեանց հետ խաղացուած և ինչ չափով յաջողուած է:

1. Տրիուր անցած մի լոկ գայրկեան աշխարհ համայն ըբնաւ չարժեր.

2. Տար իմ կապայս, ծախէ զինուով. զի անկէ վեր զինաւ<sup>1</sup> չարժեր:

3. Գինեվաճաւք, եթէ տանիս, գաւաթ մ'իսի զին տար առներ.

4. Ահա այս գորգիկ աղօթանուէր ու բաժակ մ'ալ գիւրաւ չարժեր:

5. Շըրքեղ այն թագն արքայական յորում գըտանգ կայ միշտ հոգւոյ՝

6. Թէեւ ծածկոյթ մ'է սրբտագրաւ, սակայն ոչ, գրլուու ցաւ չարժեր:

7. Ասին ինձի գոտաց սասաւի. – ի բաց կաց, երթ զու, այս գըրնէն.

8. Տես ինչ փորձանք եկաւ գրլուու, զըրան հոզն ալ ու կաւ չարժեր:

9. Քեզ այս լաւն է երես ծածկես բոլոր կարօտ քաշողներէդ.

10. Զի զօրին հոգն աշխան էտէրի տեր կատու տենչն ու ծարաւ չարժեր:

11. Լըստ այց նըկար քո թախանքն զի միքանգեան<sup>2</sup> շուկան որ գաս,

12. Գունրգոյն<sup>3</sup> տուրք բարիե՛կ պերճանք զինին կարմիր տակաւ չարժեր:

13. Բընակավայր սիրեցելոյն կը կապտէ սիրտն, այո՛, մարդուն.

14. Ական ֆարսն ինչ է այս վշտոտց. ամիսան խկ բան մի, բաւ, չարժեր<sup>4</sup>:

15. Առաջ շատ դուր եկաւ ծովն ինձ հոտով շահու, սակայն սըխաւլ.

16. Թէ ամէն կոնակն ինձի գուար հարիւր բիրաւ չարժեր<sup>5</sup>:

17. Քիոզդ գոհ, երթ, լինել սորէի, մննիկ խորշիկդ, անախտ՝ անքոյթ.

18. Զի մէկ տըրտում րոպէն ծովն ու ցամաք մէկ տեղ իրաւ չարժեր:

19. Սակաւաէտ լիր Նաֆրի նման, թող այս ընչին վ'ունայն աշխարհ,

20. Զի զարույ չափ վատաց բեռն ոսկի լիմր հարիւր տըրաւ՝ չարժեր<sup>6</sup>:

1. Հուլովական խօսորում յանգի հարկով.

2. «Միքանգեանը կը հանենք ենթենիկի վիմացը, յատակուով յարագուն լըր որ պողոն բասին մարմեն չէ, այլ եկամուռ և շատ շատ Տուղանակն աշում կամ սովորոյթ մը կը մասնէ յենէ – իրենի, բասու – բասու, յունձուռուն ի պէս:

3. Ջէինք կրնար անհարաբար գոյնրգոյն կամ գունը բառն սուեւ ուրեմն առաջին գանկը թեթեւ և սույ կը պապանչէր, երկրորդ՝ երկար և անկան. Մէր երկու ձեւեր գուն և գոյն լիքուսէկնան զաւանեն այս պէտքը:

4. Հայերէնք քարտիսու, իւր մի թէյ երկիւմի և տարածուն իմաստին պատճառաւ, մեզ անհարական երեւ անուղ մէկնարական ճնուութեան զիմնցինք բուն գիտաւ մը շփումնենին փրկելու համար:

5. Ըսեւ կուզէ. Այստականին բնակած աեղը, ուր ոք

ալ լինի, սիրաւարին սիրտը այս աեղի հետ կը կապուի, իրաւ, բայց բանի որ վիշտ ու տանջանք անմէկին են սէք, մէկ Փարու (իման Ներազան ալ լինի այս աեց որ, մնալու վիտնեն). Հափրի ուղանաւը, երկուազդի հրաշավայրն է, դարձեաւ ոչինչ է, մինչև իսկ աշխարհ զիլովին չփիտանենք այս վիշտը:

6. Հափր կենաց մէջ երկու ճամբորգութիւն ըրած է, կը ըսնի, մին կըդ զոր կ'ակնարկէ իւր տաղերուն միոյն մէջ, մէրսի վերաբի, Պարսից ծոց ուրեմն զանալուն սաստիկ ալեկոնսթեան բնուուելով՝ այս թիրթուածով լուծեր է գրից ծոցն:

7. Այսինքն անարժաններուն բերան ծուել և անոնց զարիի հասակի մը չափ բնան առկ անալը, եթէ հարիւր լիմր սուկի գոսկ ալ ըլլայ՝ չարժեր: